



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

27 հունվարի 2015թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Կարապետ Նաջիյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Կարապետ Նաջիյանը 2015թ. հունվարի 12-ին դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը, 231-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՆՏ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա են դիմումի քննությունը մերժելու հետևյալ հիմքերը.

1. «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի՝ վիճարկվող 87-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է իրավական ակտերի պարզաբանմանը:

Դիմողի կարծիքով, օրենսդիրը վիճարկվող հոդվածում իրավական ակտերի /միջանկյալ դատական ակտեր/ վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տալու համար չի նշել այն մարմնի /տվյալ դեպքում՝ դատարանների/ անվանումը, որի կողմից կայացվել է այդ ակտը: Ըստ դիմողի՝ դատական ակտի պարզաբանումը դատարանի

կողմից կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց է, որի նպատակն է հայցը բավարարելու կամ մերժելու դեպքում երաշխիքներ ապահովել հարուցված հայցով ապագա վճռի մարչելի, հասկանալի և արդարացի լինելու համար, հակառակ դեպքում արդարադատությունը կկրի երևակայական բնույթ:

Քանի որ վիճարկվող հոդվածի 1-ին մասը համակարգային առումով փոխկապակցված է նույն հոդվածի 2-րդ մասի հետ, հետևաբար, ըստ դիմողի՝ անհրաժեշտ է որպեսզի նույն հոդվածի 2-րդ մասում ավելացվի «դատարաններ» բառը, այլապես սահմանափակվում է դատարանների կողմից կայացված որոշումներին պարզաբանումներ փախու հնարավորությունը և խախտվում է քաղաքացու՝ արդար դատաբնության իրավունքը:

Դիմումին կցված դատական ակտերի և դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Այսինքն՝ վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը ձևականորեն վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարցը:

ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի բնության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Ներևաբար, առկա է դիմումի բնության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

2. Դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները:

Դիմումին կցված դատական ակտերի և դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ փվյալ դեպքում դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը ՆՏ վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վերադարձվել է: Միաժամանակ, ՆՏ վճռաբեկ դատարանն իր որոշման 2-րդ կետում արձանագրել է. «Սույն որոշմամբ նշված ձևական սխալները շարկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանել փաստահիմնադրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից»: Սակայն դիմողը նախատեսված ժամկետի ավարտից հետո կրկին անգամ չի

դիմել ՆՏ վճռաբեկ դատարան և, հետևաբար, չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, **սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Վերոհիշյալ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Ըստ սույն հոդվածի 1-ին մասի. «... դիմում ... կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը **սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները** և որը գրնում է, որ սույն գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհարական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Կարապետ Նաջիյանի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 հունվարի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-3